№ 33 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՓԵՏՐՎԱՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 16 ՓԵՏՐՎԱՐԻ № 33

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՆԵՐԿ. 39.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, փետրվարի 17-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ
ԿԸ ՏԱՑ
ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ
ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ
Պատմական դրամա 4 արար. և 6 պատկերով Գ. Զուբարի։
Մասնակցում են. տ. տ. Աբաքա, Աշխէն, Ադամեան, Ժամկին, Յամիկ, պ. պ. Աբէլեան, Ապահովրդեան, Զարիֆեան, Լաքա, Ղազարեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Նահխաթունի և ուրիշներ։
Գլխ. բեմադրիչ՝ Ա. Արմէնեան
Սկիզբը երեկոյեան ժամը հինգ 8-ին է։ ✦ Տեղերի գները սովորական են։
Տեղերի գները սովորական են։
Վարչութեան հեռաձայն անդամներ ( Տ. Յովհաննիսեան ( Վ. Մամուլեան
առ. (ա.օ.) 158. 2—1

ՆԵՎՐԱՍԹԵՆԻԱՆ
համարվում է ներկայումս ամենատարածված հիւանդութիւնը։ Բժշկական հեղինակաւոր անձեր բժշկում են այդ հիւանդութեան բոլոր երևոյթները՝ սրտի թուլութիւն, միգրէն ցաւեր, մտաւոր թուլութիւն, գլխացաւ և այլն, գործադրելով
ԲԱՌԻԷՐԻ ՍԱՆԱՏՕԳԷՆ
սրը հրաշալի կերպով ամրապնդում է հիւանդի օրգանիզմը։
Բժշկական ձեռնարկը ուղարկում է ձրի և ֆրանկո Ռուսաստանի միակ ներկայացուցիչ Ֆարիսն Պլինդպլանդ, Վարշավայում։
Ա.նիրաժեշտ նախազգուշացնում.—Իսկականը միայն ԲԱՌԻԷՐԻ Սանատօգէնը կարմիր էտիկէտով իւրաքանչիւր արկղիկի վրա։
(Ե. 12205) առ. 130. 1—1

Մ Ի Ա Յ Ն

Փետրվարի 14-ից

ՈՒՐ

ձեռք բերել էժան գնով, հաճախաւորութիւնից յետ

ՍԵՒ ԵՒ ԿՕՇԿԵՂԷՆ

Փիրման զո 18

Մարտի 14-ը ս. թ.

ԿԱՐԵԼԻ Է

մարեա թէ ձրի, խանութի տոյ զանազան տեսակ

ԳՈՒՆԱՒՈՐ ԿՐԿՆԱԿՕՇԻԿ

յուլթին ունի 75 բրից

Մինչեւ Մարտ

Ա. Ս.

„ԳԻՐԳԻԴՕՎԱ"

(Է. 2.) առ. Դվորցովայա փողոց, № 3. 159. 3—1

Нужны раіонные отвѣтственные ПРЕДСТАВИТЕЛИ со средствами для распространенія на выгодныхъ условіяхъ новой марки настоящаго французскаго шампанскаго, импортируемаго исключительно въ бутылкахъ. Предложенія съ указаніемъ референцій адресовать: ВАРШАВА, ІЕРУСАЛИМСКАЯ АЛЛЕЯ 12, В. РАМУЛЬТУ.
(Է. 2.) առ. (В. 15671) 151. 2—1

ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ԹԱՏՐՈՆ Ե. Բ. ՋԱՆՓՈԼԱՊԵԱՆԻ
Երևանի Նախկին ակումբի շինութիւնը, հիմնական վերաշինութեամբ, յարմարեցված է յատկապէս թատրոնի համար։ Առանձին պատուէրով բերված է բոլորովին նոր, շքեղ դեկորացիա։ Կան բուտաֆոր, բէկվիզիտ և ամեն յարմարութիւններ։
Պ.պ. սիրողները կարող են դիմել. ( Въ гор. Эривань, Театръ ДЖАНПОЛАДОВА. ( Тифлисъ, Контора „Энергія". Пушкинск. № 3.
(Է. 2.) առ. 1404. 15—14

ԹԻՖԼԻՍԻ ՓՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, փետրվարի 16-ին
Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը
կը տայ
ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄ
կը ներկայացվեն
I
ԷՍ ԷԼ ՔԻ ՄՕՅԻՖԼՈՒԹԻՆ
Վոդեվիլ 1 արար., հեղ. Տէր-Գրիգորեանի
II
ՀԱՄԲՈՅՐ
Կոմէդիա-ֆէերիա 1 արար., Դը Բանվիլի, թարգմ. Արմէնեանի
III
ՎԱՐՁՈՒ ԿԻՆ
Վոդեվիլ 1 արար., թարգմ. Ա. Վրոյրի
Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Գլխ. բէժիսսեար՝ Ա. Արմէնեան
Հիւրերը՝ համաձայն ընդհանուր կանոնների։
Ներկայացման տոմսակները՝ 25—75 կ. արժ., ծախվում են Ժողովարանի շվեյցարի մօտ։
Ներկայացումից յետոյ ՊԱՐԵՐ։
Ա.Զդ.—Հինգշաբթի, փետրվարի 17-ին Ընտանեկան Երեկոյթ, մանդոլինիստների խումբ և լոտոյ։ Ուրբաթ, փետրվարի 18-ին, Ընտանեկան Երեկոյթ, բենեֆիս Ա. Ս.-ի մէնեանի և լոտոյ։
154. 1—1

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ղարադաղում հայերի կոտորած և կողոպուտն է տեղի ունեցել Բահիմ խանի, Իսկանդէր խանի և Հդայեթ խանի հրոսակների ձեռքով։ Կոտորել և թալանել են Ղուլուտի գիւղը, իսկ մի մասն ևս ջարդվել է ցրտից՝ փախուստի ժամանակ։ Թալանել են նաև Խանագահ գիւղի տաւարն ու ապրանքը։

Ռուսական զօրքը դեռ Թաւրիզումն է, չէ մեկնել, և այնու ամենայնիւ նրա ներկայութիւնն ևս չէ արգելում Բահիմ խանին և միւս աւազակաբարոյ խաներին՝ կոտորածի և թալանի ենթարկել խաղաղ ժողովուրդը։ Ի՞նչ կը լինի ուրեմն, եթէ ռուսական զօրքը հեռանայ նաև Աստրաստականից։ Մինթէ պարսկական կենտրոնական կառավարութիւնը և մանաւանդ Աստրաստականի գեներալ-նահանգապետը չեն մտածում, թէ որքան անհրաժեշտ է ամեն տեսակ միջոցներ ձեռք առնել այդպիսի ցաւալի և խայտառակ դէպքերի դէմ, որպէսզի պետութիւնների և օտար երկիրների հասարակական կարծիքը համոզվի, թէ, այո, Պարսկաստանը կարող է ինքն իրան կառավարել, ապահովել իր սեփական միջոցներով իր խաղաղ ժողովրդի կեանքը, գոյքը։

Միայն օրինակելի խիստ պատիժներ ենթարկելով Բահիմ խանին և միւս աւազակապետներին կարելի է ներշնչել օտարներին հաւատացնումն, թէ, այո, պարսից կառավարութիւնը ընդունակ է պահպանել իր ժողովրդի ապահովութիւնը և խաղաղ զարգացումը։

Հայ հասարակութեան, մանաւանդ Ռուսաստանում գտնվող պարսկահպատակ հայերի վրա բարոյական պարտականութիւն կայ՝ նիւթական օժանդակութիւն հասցնելու կոտորածի և թալանի խեղճ և թշուառ զոհերին։

Հ. Առաքելեան

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12 փետրվարի

Պետերբուրգ.—Դուշէովը բաղդ ունեցաւ ներկայանալ Կայսրին և զեկուցանել Դումայի ընթացիկ գործերի և առաջիկայ աշխատանքների ծրագրի մասին։ Բարձրագոյն ունկնդրութիւնը տեւեց $1^1/_2$ ժամ։ Նորին Մեծութիւնը հաճելի եղաւ արժանացնել Դուշէովին ամենաողորմած հարց ու փորձի։

Պետական եկամուտները ծախքերից 1911 թ-ի մէջ գերակշռում են 43.419,688 ռուբլով։

—

13 փետրվարի

Բազել.—Քաղաքային դուման որոշեց կէս միլիոն ռուբլի յատկացնել կովկասեան համալսարանի օգտին։ Փոխարքան թոյլ տուեց վճարել դումարն այն դէպքում, եթէ պետական գանձարանը իր վրա կը վերցնէ հատուցանը։

—

Կ. Պոլիս. — Գնդապետ Ռիզա-բէյը վեց բատալիոնով Հոդէյդայից անցել է Մենախի և վերականգնել հաղորդակցութիւնը։

Բանակցութիւններ են շարունակվում Բաքու-Զաղէին լուսաւորութեան մինիստր նշանակելու մասին։ Մտադրութիւն կայ առևտրի մինիստրութիւնը անջատել հասարակական աշխատանքների մինիստրութիւնից և դարձնել առանձին մինիստրութիւն։

Կարմիր ծովի վրա, հրդեհից ոչնչացած «Հուբրիէթ» շոգենաւի վրա գտնվում էին 600 ուխտաւորներ, 150 զինուորներ և 20 ճանապարհորդներ։ Ազատվեց միայն մի մասը։

Բ. Դուռը պաշտօնապէս հերքում է լրագիրների այն տեղեկութիւնը, թէ երկու «Դրէդնոուտ» է պատուիրված։

—

14 փետրվարի

Պետերբուրգ.— Առաւօտեան ժամը 6-ին Սեմեոնովի կամուրջի մօտ մի կացարանում վայր ընկած լապտերից հրդեհ ծագեց, որից այրվեցին 15 մարդ։

—

12 փետրվարի

Լոնդոն. — Սորին պալատը միաձայն ընդունեց ռուսաց ձկնորսներին Ֆինմարչենում տրված առանձին իրաւունքները վերացնելու օրինագիծը։ Արտաքին գործերի մինիստրը մատնանշեց, որ Նորվեգիայի և Ռուսաստանի միջև միշտ գոյութիւն են ունեցել բարի յարաբերութիւններ, սկսած միջին դարերից մինչև ներկայ ժամանակները։ 1905 թ. Ռուսաստանը առաջինը ընդունեց Նորվեգիայի նոր միջազգային դրութիւնը։ Մինիստրը բողոքում է արտասահմանեան լրագիրների այն անհիմն լուրերի դէմ, թէ Հիւսիսային Նորվեգիային վտանգ է սպառնում Ռուսաստանի կողմից։

—

Նիկոսիա.—Ամերիկայի և Եպտոնիայի միջև գաղթականութեան մասին ստորագրված նոր պայմանագիրը այստեղ համարում են եպտոնական դիպլոմատիայի յաղթանակ։

—

Բերլին.—Վախճանվեց Շպիլհագէնը։

—

Աթէնք.—Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, որ ընդհանուր զայրոյթ է առաջ բերում որս անող յոյնի սպանութիւնը թիւրք զինուորների ձեռքով։ Ցիշեալ յոյնը անզգուշաբար անցել էր սահմանը։

—

Բամբէյ. — Կրօնպրինցը ճանապարհ ընկաւ դէպի Բերլին և Գէորգ թագաւորին ուղարկեց շնորհակալական հեռագիր, սրտագին ընդունելութեան համար։

—

Վաշինգտոն. — Սենատն ընդունեց Եպպոնիայի հետ կապված պայմանագիրը։

—

Լոնդոն.—Զինուորական մինիստրութեան բիւջէն 1911—1912 թ. թ. ընթացքում հաշվված է 27.690,000 ֆունտ, 70,000 ֆունտով նախկինից պակաս։ Բիւջէի մէջ 85,000 ֆունտը ատկացված է օդագնացութեան համար։

—

Վայլպարայսо. — Բրազէնի պղնձահանքերում գծից դուրս եկաւ գնացքը և ընկաւ ձորը։ Սպանվեցին և վիրաւորվեցին 50 մարդ։

—

Պարիզ.—Անգլ. պալատը Փալիէրին հաղորդեց թագաւորի ցաւակցութիւնը Բրէնի մահվան առիթով։ Պիշոնը Սաղոնովից ստացաւ հեռաձայնագիրը. «Ընդունեցէք Կայսերական Կառավարութեան անկեղծ ցաւակցութիւնը գեներալ Բրէնի մահվան առիթով»։ Պիշոնը ուղարկեց շնորհակալական հեռագիր։

—

Բուդապեշտ.—Աւստրիական պատգամաւորութեան մէջ էրենտալը ճառեց այն մտքով, թէ չը պէտք է խառնվել օտարազգի պետութիւնների գործերին։

Կրամարժը դէմ է սպառազինման համար տրվող դումարներին։

Զափաւոր ուկրայնացի Յեգլինսկին բողոքում է „Новое Время"-ի այն Ունգարիան մտադիր է արշաւանք գործել դէպի Մալորոսիա։

Վերջում պատգամաւորութիւնն ընդունեց արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն։

—

13 փետրվարի

Վաշինգտոն.— Ներկայացուցիչների պալատը որոշեց 45.560.000 դոլլար յատկացնել Պանամայի ջրանցքի կառուցման և 3.000.000 դոլլար էլ նրան ամրացնելու համար։

—

Կոբրուգ.—Եկաւ Ֆերդինանդ թագաւորը։

—

Սոֆիա.— Զինուորական մինիստրի հրամանի մէջ, Ֆերդինանդ թագաւորի ծննդեան 50-ամեակի առիթով, ընդգծվում են միապետի ծառայութիւնները զօրքի կազմակերպութեան մէջ, հաւատ է յայտնվում, թէ զօրքը ամեն ջանք գործ կը դնէ արդարացնելու միապետի վստահութիւնը և նոր աջողութիւնների կը հասնէ։

Ազգային ժողով։ Առաւօտեան նիստում Պետրովը, Դուդէվը և Սալովը առարկեցին մեղադրող հոտորներին։ Ցերեկվայ նիստում խօսեց Դենատիէվը։ Ժողովը որոշեց դատարանին յանձնել բոլոր նախկին մինիստրներին, բացի Շիշմանովից։

—

Բուդապեշտ.—Աւստրիական պատգամաւորութիւն։ Զեկուցանող Բակէէգեմը, կշտամբելով Մատաբիկի հացէին, մասնանշեց եղաւ, թէ ամենից առաջ անհրաժեշտ է նօրմալ քաղաքական յարաբերութիւններ պահպանել Սերբիայի հետ, խորհուրդ տուեց չը վերադառնալ վերջացած միջադէպերին և ասաց. «Այն ամենից յետոյ, ինչ որ մեզ յայտնի է, մենք չենք կարող մեղադրել այդ, ինչի մէջ մենք տեսնում ենք ներելի մոլորութիւն»։

—

14 փետրվարի

Պարիզ.—Ռուս. զինուորակ. գործակալը ռուսական զօրքի անունից արծաթէ պսակ դրեց գեներալ Բրէնի դագաղի վրա։

Նախագահ Ֆալիէրի, մինիստրների և դիպլոմատիական մարմնի ներկայութեամբ կայացաւ գեներալ Բրէնի հանդիսաւոր թաղումը։

Մօսկվայաբնակ ֆրանսիական գաղութի հինաւուրց անդամ Լուտրիէլը 7 միլիոն ֆրանկ յատկացրեց կրթական նպատակների։

—

Բուդապեշտ.— Կայսրը պալատական ճաշկերոյթին, զրուցելով պատգամաւորութեան անդամների հետ, գերմանացի պատգամաւոր Սարանակիին մատնանշեց, թէ անհրաժեշտ է կնքել չեխ-գերմանական համաձայնութիւն և շահերկու ժողովուրդների։

Աւստրիական պատգամաւորութեան զինուորական մասնաժողովը բողոքեց, որ հաւատորմի հրամանատարի և ունգարական առևտրի մինիստրի միջև կնքվել է դաշնի պայմանագիր՝ աւստրիական և ունգարական նաւատորմին անհրաժեշտ մատակարարումների համար։

—

Բերլին.— Ֆերդինանդ թագաւորի ծննդեան օրվայ առիթով ռուսաց դեսպանատան եկեղեցում կատարվեց հանդիսաւոր պատարագ։ Բոլգարական միասիայում տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն։

Վոլգի տեղեկութիւնների համաձայն, սկուպշտինայում սերբը զինուորական մինիստրի արած յայտարարութիւնը գերմանական դեսպանի հետ ընդհարվելու մասին՝ գերմանական կառավարութիւնը գտել է անգոհացուցիչ։

—

(Լրագիրներից)

Բերլին. — Նօրվէգիայի պրեմիէրը «Berliner Tageblatt»-ի թղթակցի յայտնել է, որ Նօրվէգիական մամուլի յօդուածները ռուսական վտանգի մասին չափազանցված են։ «Ռուսաստանի իսկական տրամադրութիւնը,—ասաց պրեմիէրը,—չը պէտք է շփոթել «Нов. Время»-ի շովինիստական վիժուածքների հետ հիւսիսային նահանգների մի քանի նահանգապետների եռանդի վերաբերմամբ, որոնք ուզում են ռուս-նօրվէգական վէճին ձգել անգլօ-ռուսական վէճին ձգելնորութեան շրջանի հարցի վերաբերութեամբ։ Նօրվէգիան չէ վախենում Ռուսաստանի առաջխաղացութիւնից դէպի Արևմուտք, բայց և այնպէս նա կը հոգայ ամրացնելու իր սահմանները»։

—

Վիէննա.—Ի նկատի ունենալով որ պաշտօնեաների գործադուլը ընդարձակ չափերի է հասնում, կառավարութիւնը մտադիր է դիմել բեպրեսիաների։ Կառավարութիւնը նախազգուշացնում է, որ եթէ իր միջոցները չօգնեն, այն ժամանակ պաշտօնեաները կարձակվեն պաշտօնից։ Գործադուլարները ասում են, որ կռիւը կը շարունակեն մինչև վերջ։ Պրագայում տեղի ունեցած միտինգին չեխ պօստհեռագրական պաշտօնեաները դեռ ոչ որոշել են գործադուլ չը հրատարակել։

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

12 փետրվարի

Պարիզ.—Պատգամաւորների պալատում Արմատական-սոցիալիստ Մալվին կշտամբեց Բրիանին, որ զիջումներ է անում կղերականներին և օգնում է վերականգնելու Սենտ-Էտիէնի վանական միաբանութիւնները։ Բրիանը պատասխանեց, որ միաբանութիւնները չէին կարող վերանալ մի քանի ամսվայ ընթացքում և կը ձգտեն ամեն կերպ վերակազմվել։ Ոչ ոք իրաւունք չունի կշտամբել կառավարութեանը անփութութեան մէջ։ Եթէ մեծամասնութիւնը հնարաւոր չէ գտնում լիակատար վստահութեամբ վերաբերվել դէպի կառավարութիւնը, նա կարող է օգտվել այդ առիթից։ Կառավարութիւնը չէ կարող ինքիգանների և ինսինուացիաների ամենօրեայ առարկայ լինել։ Պալատը 258 ձայնով ընդդէմ 242-ի վստահութիւն է յայտնում Բրիանին։ Քուէարկութիւնից յետոյ կաբինէտի հակառակորդները պնդում էին, թէ կաբինէտը կարող է իշխանութեան գլուխ մնալ, չունենալով այլևս հանրապետական մեծամասնութիւն։ Սակայն այդ հերքվեց պաշտօնական քննութեամբ և երևաց, որ կառավարութիւնը, յիրաւի, ստացել էր հանրապետական մեծամասնութեան ձայները։ Բայց և այնպէս մինիստրների խորհրդի նիստում Բրիանը, որին և միացան Պիշոնը, Դիւպոն, Ժիրարը, յայտնեց Ֆալիէրին, որ, չը նայած

Ֆիլադելֆիա.—Հայտնի դարձավ, որ Ֆիլադելֆիայի հայերը ունենալու են իրենց սեփական եկեղեցին։ Ֆիլադելֆիայի հայերը ունեցել են մի հանգանակություն, որի միջոցով հավաքել են 3000 դոլար։ Ֆիլադելֆիայի հայերը ունեցել են նաև մի հանգանակություն, որի միջոցով հավաքել են 30,000 դոլար։ Ֆիլադելֆիայի հայերը ունեցել են նաև մի հանգանակություն, որի միջոցով հավաքել են 30,000 դոլար։

Ֆիլադելֆիա.—Հայտնի դարձավ, որ Ֆիլադելֆիայի հայերը ունենալու են իրենց սեփական եկեղեցին։ Ֆիլադելֆիայի հայերը ունեցել են

բան է ասում ժամանակակից ընթերցողին, որ ունի իր պաշտելի անունները, բայց մի անուն, որ շատ ջերմ և հնորհապարտ յիշողություններ է զարթեցնում նրանց մէջ, որոնք սնվել են, յուզվել նրա գրուածքներով 70—80-ական թուականներին։ Եւ մենք սխալված չենք լինի ասելով, որ գերման բոմանիստի հռչակը Ռուսաստանում պակաս չէր, քան իր հայրենիքում. նա հարազատ գրող էր ռուս ընթերցողի համար, պաշտված Ի. Ս. Տուրգենեվի կողքին. բոմանիստը ակնյայտ տեսաւ այդ սիրոյ հաւասարքը Ռուսաստան այցելելու ժամանակ 80-ական թուականներին Պետերբուրգում։ Գր. Շպիլհագենը ծնվել է փետրվարի 24-ին 1829 թ-ին և բազմակողմանի կրթութիւն է ստացել Բերլինի, Բոնի և Գրէֆվալդի համալսարաններում։

Որպէս վիպագիր նա հռչակվում է անցեալ դարի 60-ական թուականներին, երբ երևան եկան մէկը միւսի ետևից «Պրոբլեմատիք բնաւորութիւններ», «Մաւրից՝ լոյս» և առաւելապէս «Կարգով շարքի մէջ» (ռուս ընթերցողներին յայտնի՝ «Один въ полѣ не воинъ» անունով, որի դիւաւոր հերոսի անունն է Լէօ) բոմանները, որոնց հետևեցին «Մուրճի և Զնդանի միջև», «Ինչի՛ մասին էր երգում ծիծեռնակը» և այլն։

Իր բոմանների մէջ Գր. Շպիլհագենը ցոլացնում էր հասարակական կեանքի լայն պատկերը, նոր Գերմանիան, առաւելապէս յիշատակելի 1848 թ-ից յետոյ, արթնացնելով ընթերցողի մէջ հետաքրքրութիւն դէպի ժամանակակից հրատապ հարցերը, սէր դէպի առաջադիմութիւն, մնալով գրեթէ միշտ իբրև գեղեցիկ գեղարուեստագէտ, գրեթէ բանաստեղծ։ Լայն կրթութեան տէր, նա, ի հարկէ, չէր կարող տանել այն ձգտումները, որոնք այս կամ այն կերպ աշխատում են սահմանափակել ազատ խօսքը, և Շպիլհագենը առաջին շրջանում մաքառեց Հէյնցի օրինագծի դէմ ծերութեան հասակում, հարազատ մնալով իր հռչակին։

Մենք ցաւել կարող ենք, որ հռչակաւոր վիպագրի գրուածքներից ոչ մէկի հայերէն թարգմանութիւնը չը կայ։ Պետ. Զաքարեան

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐ. ԵՐԵԿՈՅԹԸ

Փետրվարի 12-ին՝ Թիֆլիսի Ժողովարանում տրված երեկոյթ-պարահանդէսը յօգուտ Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան գրաւել էր հասարակութեան մեծ բաղմութիւն, և երեկոյթը իրանց ներկայութեամբ պատուել էին նաև Փոխարքայի ամուսին կոմսուհի Վ.օրոնցօվա-Դաշկովան, Փոխարքայի դիւանատան կառավարիչ Պետերսոն իր ամուսնու հետ, Թիֆլիսի նահանգապետը, Փոխարքայի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Կաղանովիչով, գեներալ Ս. Լազարեան։ Կոմսուհուն Ընկերութեան կողմից տրվեց ծաղկեփունջ և մատուցվեց պարտ և պատշաճ հիւրընկալութիւն, որի համար կոմսուհին յայտնեց իր շնորհակալութիւնը և նուիրեց Ընկերութեան իր տոմսակի համար 200 ռուբլի։

Երեկոյթը սկսվեց մի համերգով, որին մասնակցում էին օրիորդ Կովալչի, տիկին Մալինովսկայա, տիկ. Օ. Մայսուրեան, Սրմէնեան, Զիտեան։ Օր. Կովալչի եղաւ երեկոյթի զարդը իր դուրեկան ձայնով և երգով, որ ցոյց է տալիս, թէ նրա ձայնը շատ լաւ դրված է և նա լաւ դերոց է անցել։

Համերգից յետոյ տեղի ունեցաւ հայկական հարանիքի (Ախալցխայի) հանդիսաւոր գնացքը մաշալաներով, տեղական հագուստներով և զուռնայով։ Կոմսուհին և հիւրերը մեկնեցին ժամը 2-ի մօտերը, իսկ պարերը տևեցին մինչև առաւօտեան ժամը 4-ը։

Ընդհանուր մուտք թէ տոմսակներից, թէ բուֆէյից և թէ ալէգբի իրերի վաճառումից հանում է մօտ 3,000 ռուբլու, ծախք մօտ 1,000 ռուբլի, այնպէս որ զուտ արդիւնք յօգուտ ընկերութեան կը մնայ 2,000 ռուբլի։

Մի նկատողութիւն, որ կարելի էր անել երեկոյթի կարգադրիչներին, այդ այն է, որ համերգի ժամանակ ոչինչ հայկական երգ կամ ընթերցումն չէր ծրագրված, և եթէ Սրմէնեան չը կարդար Ս. Զոպանեանի մի ոտանաւորը, մենք կարող էինք ամենայն հանգստութեամբ երեակայել մեզ, թէ երեկոյթը հայկական ոչ մի բան չէ պարունակում իր մէջ։

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### I

Պետերբուրգ, 6 փետրվարի

Զորս օր է Պետերբուրգումն եմ։

Հասայ թէ չէ, սկսվեցին այն համագումարի նիստերը, որոնց մասնակցելու հրաւիրված եմ ես այստեղ։

Նիստերից ազատ ժամերին ծանօթանում եմ մայրաքաղաքի կեանքին և տեսակցում զանազան անձերի հետ։

Յետագայ նամակներով կը հաղորդեմ իմ մի քանի տպաւորութիւնները։

Մայրաքաղաքը վերջին երկու շաբաթը զբաղված էր Բուտուրլինի սպանութեան դատաստանական գործով, որտեղ բացի յանցագործական հանգամանքներից պարզվում էին և ուրիշ կենցաղական գծեր։

Գործը վերջացաւ և հասարակութիւնը սպասեց իր հետաքրքրութիւնը դէպի նա։

Աւելի երկարատև, ծանր և մաշող է մի ուրիշ աւելի մեծ խնդիր, որով մայրաքաղաքը զբաղված է վերջին ամիսներում։

Դա բարձրագոյն դպրոցների ուսանողութեան յուզմունքների բազմատեսակ արտայայտութիւնն է։

Պետերբուրգին վիճակակից են այդ երևոյթի վերաբերութեամբ Ռուսաստանի և ուրիշ քաղաքները, որտեղ գոյութիւն ունեն բարձրագոյն դպրոցներ։

Թէ ինչ ելք կը ստանայ ուսանողական գործադուլը, ոչ ոք չէ կարող գուշակել։

Մամուլը արձանագրում է գործադուլի ընթացքը և նրա բնորոշ արտայայտութիւնները։

Վերջին ամենախոշոր երևոյթը Մոսկվայի համալսարանի պրոֆէսորների հանրագիրն է, որ բազմատեսակ մեկնութիւնների առարկայ է առօրեայ խօսակցութեան մէջ։

Նա երևի արդէն յայտնի կը լինի ձեզ լրագրական քաղուածներից։

Մտադիր եմ ներկայ լինել Գեսական Դուման նիստերին։ Այնտեղ կը գնամ մեր համագումարի անդամների հետ միասին։ Եթէ այդ պատահական այցելութիւնը կը տայ հետաքրքրական նիւթ, կը զեկուցեմ «Մշակի» ընթերցողներին։

Այսօր կարողացայ տեսակցել Յովհաննէս ժամարեանցի հետ և նախնական մի խօսակցութիւն ունենալ գիւղատնտեսական դպրոցի մասին։

Խօսակցութիւնը շօշափում էր մի քանի հիմնական խնդիրներ՝ վերաբերեալ դպրոցի տիպին, տեղին և նիւթական միջոցներին։

Յաջորդ խօսակցութիւնները աւելի ևս կը պարզեն գործի էութիւնը։

Առ այժմ հնարաւորութիւն չունեմ հաղորդել մանրամասնութիւններ, մինչև նրանք աւելի որոշակի ձևակերպված չը լինեն։

Կարող եմ այսքանը արձանագրել, որ ժամարեանների նպատակն է ունենալ դպրոցը երկրագործ ժողովրդին մերձաւոր տեղերից մէկում՝ ընդարձակ գործնական տնտեսութեամբ։ Ժամարեանները ոգեորված են իրանց ձեռնարկած գործի կուլտուրական արդիւնաւէտութեան գաղափարով։

Ա. Քալանթար

## Լ. ԳԻՍՍԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, փետրվարի 12-ին, երեկոյեան ժամը 8-ի մօտերը, Մուշայիդ այգու մուտքի առաջ սպանվեց Թիֆլիսի էլէքտրաքարշի անօնիմ ընկերութեան վերատեսչի օգնական բեւգիանպատակ Լէօն Գուստավովիչ Գիսսը հետևեալ հանգամանքներում։

Սպանված Գիսսը սովորութիւն ունէր միշտ մեն գալ առանց անձնապաշտպանի։ Այդպէս եղաւ նաև օրհասական օրը։ Դուրս գալով սովորական զբօսանքի կնոջ հետ միասին, հանդուցեալը դիմեց Մուշայիդի նրբափողոցով դէպի Միքայէլեան փողոցը։

Այն պահին, երբ Գիսսը կնոջ հետ անցնում էր Մուշայիդի մօտով, յարձակվեցին երկու հոգի, որոնք, ըստ երևոյթին, հետևում էին իրանց զոհին, և տարձանակի 3 զէնքերով սպանեցին նրան տեղն ու տեղը։

Վերջացնելով իրանց գործը, մարդասպանները փախուստի դիմեցին ներքև դէպի Մուշայիդի նրբափողոցը, կուր գետի կողմը։

Թէև ոստիկանները ընկան նրանց ետևից, բայց մթութեան պատճառով անկարող եղան ձերբակալել չարագործներին։

Անմիջապէս սպանութեան տեղն եկան խուզարկու բաժանմունքի պետը, Թիֆլիսի նահանգական դատարանի դատախազ Գրօմովը, ոստիկանապետի օգնականը, տեղական քննիչը և դատախազի օգնականը։

Սպանվածի դիակն ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոց։

Սպանութեան օրը Գիսսը ժանդարմիական իշխանութիւնից տեղեկութիւն առաւ, որ իր կեանքի դէմ մահափորձ է պատրաստվում, ըստ որում էլէքտրաքարշի վերատեսուչը յորդորից ձեռք առնել նախազգուշական միջոցներ, բայց հանդուցեալը չանսաց։

Բացի իշխանութեան տեղեկութիւնից, Գիսսը յաճախակի սպառնական նամակներ էր ստանում, որոնց վրա նա ուշադրութիւն չէր դարձնում։

Կասկածով ձերբակալված են մի քանի մարդիկ։ («Кав.»)

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 11 փետրվարի

Նախագահում է իշխան Վ.ոլկոնսկին։

Նախագահը յայտնում է. «Մանիֆեստով անցեալ նիստի արձանագրութեան հետ, ես տեսայ, որ Դումայի անդամ Պոկրովսկի 2-րդ իր ճառի մէջ ասել է հետևեալ խօսքերը. «Երրորդ Դումայի շաբաթներում մենք ճանաչում ենք ռուսական զարդերի ակտիվ գործիչներին»։ Ես այդ դարձուածքը համարում եմ միանգամայն անթոյլատրելի և Դումայի անդամ Պոկրովսկի 2-ին կարգի եմ հրաւիրում» (ծափահարութիւն աջից և կենտրոնում)։

Լիցը զեկուցանում է դատական բարեկարգութիւնների մասնաժողովի վճիռը, որ ցանկալի և յետագայ մշակման արժանի է գտել Դումայի 73 անդամների օրէնսդրական առաջարկութիւնը ամուսինների բաժան կենցաղութեան մասին։

Արդարադատութեան մինիստրութեան առաջին դեպարտամենտի վերատեսուչը կառավարութեան անունից յայտնում է, որ մինիստրութիւնը իր վրա է վերցրել այդ հարցի մշակութիւնը և իր ենթադրութիւնները Դումային կը ներկայացնէ մօտիկ ապագայում։

Դերասիմովը ասում է, որ սահմ.-ռամ. կավարները ամբողջովին կողմնակից են առաջարկութեան. առհասարակ Դուման պէտք է ազատէ ռուս կնոջը, իբրև մարդու և քաղաքացու, միւս բոլոր անցեալի անհաւասարութիւններից։

Բերէզովսկի 2-րդ յայտնում է, որ աջակողմեանների ֆրակցիան ձեռնպահ է մնում արտայայտելու իր սկզբունքային վերաբերմունքը դէպի այդ առաջարկութիւնը և կը սպասէ կառավարական օրինագծին։

Կրոպոտովը միանում է առաջարկութեանը աշխատաւոր խմբակի կողմից։

Քուէարկութեամբ օրէնսդրական ենթադրութիւնը ճանաչվում է ցանկալի։

Հերթին Լեհական Թագաւորութեան մէջ ինքնավարութիւն մտցնելու օրինագիծն է։

Զեկուցանող Լէօնովը մատնանշում է, որ Լեհական Թագաւորութեան ազգաբնակութիւնը վաղուց հասունացել է զեմստվո մտցնելու համար և անհամբերութեամբ սպասում է նրան. խաբել այդ ազգաբնակութիւնը ոչ միայն քաղաքական սխալ կը լինէր, այլ և անարդարութիւն։

Տեղական տնտեսութեան գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչը յայտնում է, որ մինիստրութիւնը չը հրաժարվելով օրինագծի ուսումնասիրութիւնից, հարկաւոր է համարում հիմնաւորել նրան մի փոքր ուրիշ սկզբունքների վրա։ Մինչև զեմստվո մտցնելը անհրաժեշտ է զեմստվոյին պարտականութիւնների բարենորոգում և քաղաքային ինքնավարութիւն, առանց որի հնարաւոր չէ լօգը և վարչական դարձնել անկախ զեմստվոյին միութիւններ։ Բացի դրանից կառավարութիւնը դժուարանում է զեմստվոյին ձայնաւորների ընտրութիւնը յանձնել գմինների ժողովներին մինչև բարենորոգումը (ծափեր աջից և կենտրոնում)։

Գլէբով 2-րդ ողջունում է կառավարութեան ցանկութիւնը, որ յանձն է առնելու օրինագծի մշակումը. հոկտեմբերեանները միշտ կողմնակից են եղել Լեհական Թագաւորութեան մէջ լեհերին տալու այն ամենը, ինչ որ ունեն ռուսները Ռուսաստանում. դրանում նրանք տեսնում են սլաւոնական վէճի լուծման միակ ճանապարհը։

Բերէզովսկի 2-րդ աջակողմեանների անունից օրինագծի անսպասելի ներկայացման մէջ տեսնում է սոսկ ընտրողական մանեւրը հոկտեմբերեանների կողմից, որոնք ցանկանում են իրանց կողմը թեքել լեհերի ձայները առաջիկայ ընտրութիւններին։ Դիմելով օրինագծի էութեան, հեռատեսը անհրաժեշտութիւն չէ տեսնում շտապել զեմստվո մտցնելու Պրիվիսլինեան երկրում, որ մտաւորական ու կուլտուրական, ինչպէս նաև կրթական տեսակէտից բարձր է կանգնած Ռուսաստանի կենտրոնական նահանգներից և վաղուց անտի զմինների ձևով ունի այն մաքր զեմստվոյին միութիւնը, որի մասին բուն Ռուսաստանը միայն երազում է։ Պրիվիսլինեան երկրում զեմստվո մտցնելը զեմստվոյին մտտեսութիւնը հասարակ ժողովրդի ձեռքից կը տայ լեհական «պօլիտիկան» ինտելիգենցիային և կը ստեղծէ յեղափոխականների որջ, որ Լեհաստանին կը հասցնէ 31 թուականներին (ծափեր աջից)։

Հոկտեմբերեանները Պրիվիսլինեան երկրին աւետում են սէյմ ֆինլանդականի նման և դիմակաւորում են նրան։ Աջակողմեանները նրանց հետ չեն գնայ։ (ծափեր աջից)։

Բոբրինսկի 2-րդ նացիոնալիստների կողմից ասում է, որ զեմստվոն Լեհական Թագաւորութեան մէջ կարելի է մտցնել առանց որևէ միացման։ Հռետորը յոյս ունի, որ լեհերը ռուսներին Գալիցիայում կը տան գտնել մի մասը այն բանի, ինչ որ նրանք ունեն Ռուսաստանում (ծափեր)։

Գրաբսկին շեշտում է, որ քաղաքական արգելքներ Լեհաստանում զեմստվո մտցնելու վերաբերմամբ գոյութիւն չունեն, այլ կայ միայն քաղաքական անհիմն կասկած։ Հանուր լեհ ժողովուրդը պատրաստ է իր այժերը նուիրել երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացմանը և կարող կը լինի կատարել այն, ինչով հպարտանում է այնպէս ռուսական ինտելիգենցիան կենտրոնական զեմստվոներում։

Բուլատը աշխատաւոր խմբակի անունից խօսում է քննվող օրինագծի օգտին, թէև կասկածում է, թէ նա լոյս տեսնէ կառավարութեան փոփոխվող տրամադրութիւնների շնորհիւ։

Միլիւկովը յայտնում է, որ սահմ.-ռամ. կավարները ձայն կը տան յօգուտ օրինագծի, թէև ներկայ օրէնսդրական ենթադրութիւնը գտնում են պակասաւոր։ Սահմանադիր-ռամկավարները առաջվայ նման կողմնակից են Լեհաստանին դաւառական աւտոնոմիա տալուն։

Գլէբով 2-րդ ըստ կարգի առարկելով աջակողմեան Բերէզովսկիի խօսքերին, ասում է. «Դուք երբէք և ոչ մի տեղ մեզ հետ չէք ընթանում, նախ՝ մեր ճանապարհները տարբեր են, և երկրորդ՝ յարգանք ունեցէք դէպի մեր զղջանքի զգացմունքը» (երկար ծափահարութիւն կենտրոնում և ձախից)։

Դուման համարեա միաձայն օրինագծի մշակումը ցանկալի է գտնում։

Հերթին հեղինակի իրաւունքի օրինագիծն է։

Միլիւկովի և Աջեմեանի խօսակից յետոյ քուէարկութեամբ օրինագիծն ընդունվում է համաձայնեցուցիչ մասնաժողովի մեծամասնութեան խմբագրութեամբ։

Իշխան Տէնիշովը զեկուցանում է այն օրինագծի մասին, որ վերաբերում է յանցաւորներին օտարազգի պետութիւնների պահանջներով յանձնելու հարցին։ Օրինագիծը, կազմված փոխադարձութեան հիմունքներով, նախատեսում է քրէական և քաղաքական յանցագործների յանձնումը, եթէ վերջին տեսակի յանցանքները վերաբերում են օտարազգի պետութեան զեկավարի պատիւը, առողջութիւնը, ազատութիւնը և կեանքը վտանգի ենթարկելուն։ Ցանձնումը կատարվում է այն պայմանով, որ յանձնվողը դատվելու է անպայման այն յանցանքի համար, որի մէջ նա բռնվել է, և դատվելու է նորմալ դատարանով։

Տարբեր ֆրակցիաների պարզաբանվելուց յետոյ, որոշվում է անցնել յօդուածային ընթերցման։

Հակիրճ մտքերի փոխանակութիւնից յետոյ, օրինագծի բոլոր յօդուածներն ընդունվում են մասնաժողովի խմբագրութեամբ։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի նահանգապետը դժուարացել է հաստատել քաղաքային վարչութեան չորրորդ անդամ ժուրուլիի ընտրութիւնը՝ Թիֆլիս քաղաքի պատշաճ ցէնզ չունենալու պատճառով։

◆ Կիրակի, փետրվարի 13-ին, կոմսուհի Վ.օրոնցովա-Դաշկովայի նախագահութեամբ կայացաւ Զրահեղէններին Ազատող Ռուսական Կայսերական ընկերութեան նիստը, ուր որոշվեց Թիֆլիսում սպասվող հեղեղի առաջն առնելու համար պատրաստի ունենալ 4 նաւակներ լուղորդներով Պեսկիում և 2 նաւակներ լուղորդներով Օրթաճալայում։ Նաև տալ 1400 ռ. ազատարար աշխատանքների համար։

◆ «Баку» լրագրի ասելով, այս օրերս Բաքուի վրայով անցել է Անիի վանահայր Միքայէլ վարդապետը դէպի Պետերբուրգ, ուր նա հրաւիրվել է պրոֆ. Մաբրից՝ Անիի թանգարանի մանրամասնութիւնների հետ ծանօթացնելու համար։

◆ Կիրակի, փետրվարի 13-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Զուբալովի Ժողովրդական Տան մէջ կայացաւ Թիֆլիսի ժողովրդական հանրարանի անդամների ընդհանուր ժողովը, որ չը կարողացաւ աւարտել իր օրակարգի խնդիրների քննութիւնը և յետաձգվեց շարունակութիւնը մի այլ օրվայ։ Մանրամասնութիւնները կը հաղորդենք յետոյ։ Ժողովը սկզբում, համաձայն պ. Մ. Զմշկեանի առաջարկի, յոտնկայս յարգեց Լէվ Տոլստոյի յիշատակը։

◆ Ամսիս 13-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել հայերէն մի նոր շաբաթաթերթ «Դարբին» անունով, որ «Մեր շաւիղը» վերնագրով իր առաջնորդող յօդուածում յայտնում է, թէ առանձին նշանակութիւն է տալու կանանց հարցին և իր էջերը լայն բաց է անելու «կնոջ տրամաբանման» գործին։ Խմբագիր-հրատարակիչն է Գ. Տէր-Ղևոնդեան, որ մինչ այդ «Սուրհանդակ» լրագրի աշխատակիցն էր։ Նոր թերթի բաժանորդագինն է 2 ռ. Թիֆլիսում և 3 ռ. գաւառներում։

◆ Հայոց Ազգագրական Ընկերութիւնը ստացել է Ե. Զանփոլադեանից 11 կոտոր բրածուներ Հին-Նախիջևանի ագահանքից։

◆ Այսօր, փետրվարի 16-ին, երեկոյեան ժամը 8-ին, Կայսերական Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան բաժնի նիստում պ. Սատունին և Ֆարֆարովսկին կը կարդան զեկուցումներ՝ առաջինը «Սև ծովի ափերի փոփոխութեան» և երկրորդը՝ Հիւսիսային Կովկասի կիսաւաչկատուն ժողովուրդների (Թիւրքմէնների, կալմըկների, նոգայների) մասին։

◆ «Кавказскій Край» թերթը փետրվարի 10-ի իր համարում (№ 32) թարգմանել է ամբողջովին «Մշակի» առաջնորդող յօդուածը (№ 25) Թիւրքիայի հայերի դրութեան մասին։

◆ Փետրվարի 18-ին, Զուբալովեան Ժողովրդական Տանը, տեղի կունենայ գրականագեղարուեստական առաւօտ՝ նուիրված Ս. Զեխովի յիշատակին։ Մասնակցում են պրոֆ. Ժուրաիովսկի, Նիկուլին, Մուրոմցէվ, Զարբովա և Լարունսկայա։

◆ Թիֆլիսի մասնաճառները դարձեալ խնդրագիր ներկայացրին քաղաքային վարչութեանը, խնդրելով ոչխարի մսի համար սակագին չը նշանակել, այլ թոյլ տալ վաճառելու իրանց ազատ գներով։ Մսագործները իրանց խնդիրը պատճառաբանում են նրանով, որ ճանապարհների անկանոն հաղորդակցութիւնը արգելք է լինում հարկաւոր քանակութեամբ ոչխար բերել քաղաք։ Ներկայումս մսագործները ոչխար այլևս չեն մորթում, և եթէ պատահմամբ մի տեղ լինում է, ֆունտը վաճառվում է 20—25 կոպէկով։ Այս երկու օրս կը գումարվի քաղաքային մտտեսական մասնաժողովը, որպէսզի քննէ մասնաճառների վերոյիշեալ միջնորդութիւնը։

◆ Պետերբուրգ մեկնեց Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին։

◆ Տեղական թերթերում հաղորդվեց, որ «Русское Знамя» թերթը արշաւանք է սկսել կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Բուդոլֆի դէմ։ Այժմ տեղեկացվում է, որ հոգաբարձուն դատ է սկսել յիշեալ թերթի խմբագրի դէմ, մեղադրելով նրան զրպարտութեան մէջ։

◆ Այն չը տեսնված սառնամանիքները, որոնք եղան նաև Թիֆլիսում, պատճառ դարձան հիւանդութիւնների տարածման։ Միայն յունվար ամսում քաղաքի բոլոր բուժարաններում ընդունվեցին 7080 հիւանդներ։

◆ Տեղական ռուս թերթերի ասելով, Թիֆլիսի նաւթապահեստների տէրերը ահա 7-րդ ամիսն է, որ կազմել են գաղտնի սինդիկատ և այդպիսով նաւթի գները ինքնակամ բարձրացրել են շատ մեծ չափով։ Առաջին բողոքը դրա դէմ բարձրացրին գործարանատէրերը, որոնք խնդրել են նահանգապետից՝ միջոցներ ձեռք առնել այդ անօրինական երևոյթի առաջն առնելու համար։

◆ Պարզվում է, որ Բաքուում միայն էլէքտրաքարշ կառուցանելու թոյլատրութիւնը կախված է ներքին գործերի մինիստրութիւնից, իսկ Շոլարի ջրանցքի կառուցման թոյլատրութիւնը կարող է տալ նաև Կովկասի բարձր իշխանութիւնը։

◆ Կովկասի Փոխարքայի թոյլատրութեամբ Բաքուի քաղաքային ինքնավարութիւնը իրաւունք է ձեռք բերում գարնանը, խօլերա երևալու դէպքում, ծախսել պահեստի գումարներից ընդամենը 4,000 ռուբլի։

◆ Բաքուում քաղցածների մի հոծ թիւ դիմել է օգնութեան համար նաև Մարդասիրական Ընկերութեան, որը օգնութեան գործը կազմակերպում է ծխատէր-քահանաների աջակցութեամբ։

◆ Երևանի սարդարի այգին վերածվել է պտղաբուծութեան, գինեգործութեան և բանջարանոցի փորձնական այգու։

◆ Գուգաուտի գաւառամասում, Սուխումի մօտերը, ձիւնի տակ մնացին 40 ծխախոտագործ հայեր։ Ձիւնի բարձրութիւնը 2 սաժէն է։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութեան առաջ միջնորդութիւն է յարուցված՝ թոյլ տալ բանալու Թիֆլիսում ֆարմացէվտների բիւրօ գեղատներ առնելու և վաճառելու նպատակով։

◆ Փետրվարի 24-ին Պաւլովը Ժողովրդական Տանը դասախօսելու է հրաբուղխների և երկրաշարժի մասին։

◆ Թիֆլիսի, Բաքուի և Բերլինի միջև հաստատվեց երկաթուղային միջազգային ուղղակի երթևեկութիւն։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

### ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

«Փառանձեմ» պիէսան

Երկուշաբթի, փետրվարի 14-ին, հայ դերասանական խումբը առաջին անգամ բեմ հանեց մի հայ երիտասարդ փաստաբանի՝ Մ. Գէորգեանի հեղինակած պատմական բովանդակութեամբ «Փառանձեմ» անունով դրաման, որը տեսնելու եկել էր հայ հասարակութեան խուռն բազմութիւն։

Թողնելով այդ նոր և ինքնուրոյն պիէսի մանրամասն վերլուծութիւնը յաջորդ անգամին, պէտք է ասենք, որ նա առաջ բերեց հիասթափութիւն և պէտք է համարել ֆիասկո կրած։ Այդ դրամա կոչված պիէսի մէջ ամենից առաջ չը կայ ոչ մի դրամատիզմ. նա պարունակում է շատ անբնական և արուեստակեալ կողմեր և նոյն իսկ գռեհիկ տեսարաններ։ Պիէսան չունի բեմականութիւն և գործողութիւնները, իսկապէս, կատարվում են միայն բեմի ետևում։ Պատմական շրջանն ևս լաւ չէ ուսումնասիրված, բնաւորութիւնները, զէմքերը հարազատորէն չեն դուրս բերված։ Պիէսան մեղմնչում է նոյն իսկ պատմական շրջանի արտաքին կողմերի դէմ, որովհետև այն զգեստները, որ կրում էին հայ իշխանները, նախարարները, և մանաւանդ այն զգեստը, որ կրում էր Փառանձեմը, դժուար թէ կարողանային գոյութիւն ունենալ Հայաստանում 4-րդ դարի սկզբին։

Առ հասարակ պիէսը թողեց անսպասած պաւորութիւն և մի աւելորդ անգամ ապացուցեց, որ պատմական պիէսները մեզ մօտ չեն աջողվում։ Հ. Ա.

Շաբաթ, փետրվարի 12-ին, Զուբալովի Ժողովրդական Տանը հայկական սեկցիայի հերթական ներկայացումը խաղացվեց Գուցկովի յայտնի «Ուրիէլ Ակոստա» դրաման՝ մասնակցութեամբ Զարիֆեան ամուսինների և դերասան Յարութիւնեանի։ Թատրոնը ծայրէ ի ծայն լիքն էր. շատերը յետ դարձան տոմսակ չը լինելու պատճառով։ Այժմ հաստատապէս կարելի է յայտնել, որ ժողովրդական ներկայացումները հայ ժողովրդական լայն խաւերի համար դարձել են մի այնպիսի պահանջ, որ ամեն մի ներկայացման տոմսակները օրեր առաջ արդէն սպառված են լինում։

Դերասան Զարիֆեանը Ակոստայի դերը կատարեց զգացված և տպաւորիչ. մանաւանդ ուժեղ տեղերում խաղը թողնում էր շատ խիստ տպաւորութիւն և յուզում էր հանդիսականներին, որոնք որոտընդոստ ծափահարութեամբ բազմիցս բեմ էին հրաւիրում Զարիֆեանին։ Շատ լաւ էր և տիպիկ

դերասան Յարութիւնեանը Քանթասի դերում. միւսները պահպանում էին իրանց խաղով անսամբլը։ Հասարակութիւնը շատ գոհ սրտով հեռացաւ թատրոնից։ Շ.

—

Փետրվարի 13-ին Արքունական թատրոնում տեղի ունեցաւ Մ. Մինցէր-Զակրէվսկայայի բենեֆիսը։ Օպերային խումբը ներկայացրեց վերսկսելուց առաջին անգամ Չայկովսկիի «Դուբրովսկի» օպերան, որի լիբրէտտոն առնված է Պուշկինի գրուածքից։

Բենեֆիցիանտ-երգչուհին օպերային խմբի մէջ գրաւած ունի առաջնակարգ տեղերից մինը։ Յիշեալ օպերայի մէջ նա Մաշայի դերը տարաւ վերին աստիճանի հմտօրէն, զգացված երգով և համաչափ խաղով։ Թատրոնը լցած հասարակութիւնը վարձատրեց նրան անվերջ ծափահարութիւններով և շատ թանգագին ընծաներով։

Սովորականի նման, իր ախորժալուր ձայնով հաճոյք պատճառեց տենոր Կօրչմարովը, որ այդ գիշեր կատարում էր Դուբրովսկիի որդի Վլադիմիրի դերը։ Ե.

—

Կրասնօվոդսկ, 7 փետրվարի

Կիրակի, փետրվարի 6-ին, ծխական դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ երրորդ անգամ մանկական էժանագին ցերեկոյթ, որը իր բովանդակութեամբ միանգամայն նպատակայարմար և ուշագրաւ էր թէ աշակերտ-աշակերտուհիների և թէ ծնողների համար։ Ուսուցչական կազմի այդ ձեռնարկութիւնը և դպրոցում գոյութիւն ունեցող մշտական փոքրիկ բեմը՝ արժանի են համակրութեան և խրախուսանքի։ Ցերեկոյթը բացվեց Կրիլովի «Демяново ухо» առակով և վերջացաւ Սէյրիի «Ես իշխան եմ» 1 գործ. մանկական պիէսայով։ Միծաղ և զուարճութիւն պատճառեցին ներկայ եղող հանդիսականներին ուսումն. փոքրիկ աշակերտներից Անաստասեան, Մակարեան, և աշակերտուհիներից Վարդապետեան ու Ալէքսանեան իրանց արտասանած ոտանաւորներով և օրինակելի դերակատարութեամբ... Տեղի ունեցան մանկական պարեր թառի նուագակցութեամբ և երգվեցին մի քանի ժողովրդական երգեր։

Մուտքը մեծերին 20 կ., փոքրերին 10 կ։ Ծնողներից շատ քչերն էին բարեհաճել գալ։ Զ.-էն

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Ատրպատականի Ղարադաղ գաւառում հայերի կոտորած է տեղի ունեցել Բահիմ-խանի հրոսակների ձեռքով։ Սպասվում են նոր կոտորածներ և թալաններ։

✦ Փետրվարի 17-ին, Վարդանանց տօնի օրը, Բագուում տեղի է ունենալու Հայկական սովորական XXIX եւ-րեկոյթը յօգուտ Մարդասիրական Ընկերութեան։

✦ Այս օրերս Ղազախում մեռել է տեղական վաճառական Մուհամմէդ Մուհարրեմօվը։ Հանգուցեալը 6,000 ր. է կտակել «Նուֆէդ» դպրոցի օգտին։

✦ Վճռված է ռուսաց զօրքերը Ղազվինից դուրս բերել մարտին։

✦ Պետերբուրգից աքսորվեցին 392 ուսանողներ։

✦ Մոսկվայից ուսանողները խմբովին հեռանում են։

✦ Մակէդոնական բոլգարների դրութիւնը սարսափելի է։ Երիտասարդ թիւրքերը անուղղելի են, ապստամբութիւնը անխուսափելի է։

✦ «New-York-Herald»-ին Վաշինգտոնից հաղորդում են, որ պատգամաւոր Դարսօնի կարծիքով չի անցնի ութ ամիս՝ պատերազմ կը ծագէ Եապոնիայի և Միացեալ-Նահանգների միջև։

✦ Պէկինի վաճառականութիւնը Չինաստանի հարաւի առևտրական պալատներից առաջարկութիւն ստացաւ, որ, իբրև բողոք ռուսական ուլտիմատումի դէմ, բոյկոտ յայտարարվի ռուսական ապրանքներին։

✦ Օրէնբուրգի մահմէդականների մէջ սկսված է մեծ չափերով հանգանակութիւն յօգուտ Թուրքեստանի երկրաշարժից ձեռ ասվածների։

✦ Պարիզում, Լօնդօնում և Մադրիդում առաջին անգամ երևացել են շալվարների տեսք ունեցող իւրկաներ հագած կանայք։ Ամենուրեք այդ նոր մօդան սենսացիա է առաջ բերում։

✦ «Նօբէլ եղբ.» նաւթարդիւնաբերական ընկերութեան 1911 թւի նախահաշիւը կազմված է այսպէս. ընդհանուր եկամուտ 104,3 միլիոն ռուբլի և 101,2 միլիոն ընդհանուր ծախք։

✦ Ստաւրօպոլում մի բանտարկեալ չուգունի մի կտորով սպանեց բանտապետ Իվանիցկիին։

✦ Շուտով սուլթանը կը ձեռնարկէ երկար ճանապարհորդութեան։

✦ Սկիւտարում ալբանացի պաշտպանների ընդհանուր ժողովը խիստ բանաձև ընդունեց երիտասարդ-թիւրքերի ըէժիմի դէմ։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.

12 փետրվարի

ՄՈՍԿՎԱ։ Քաղաքապետը 500 ր. տուգանքի ենթարկեց «Утро Россіи» լրագրին՝ «Կառավարութիւնը և Դուման» յօդուածի համար։

ՎԼԱԴԻՎԱՎԿԱԶ։ Սագոպշ գիւղում տուրքերը ժողովելու ժամանակ ընդհարում եղաւ բնակիչների և ժանդարմների միջև։ Վիրաւորվեցին պրապօրշչիկ Կուրիէվը, 2 պահակներ և 2 գիւղացի։

13 փետրվարի

ՆԱՐՎԱ։ Լեվէնսարից հաղորդում են, որ առաւօտեան զէպի Սէյսկարի կողմն եկաւ մի սառոյցի կտոր 40 ձկնորսներով։ Լուրերի համաձայն, ձկնորսների մի մասը եկել է կօյվիստօ։

ՍՕՖԻԱ։ Երէկ 3 ձկնորսներ նաւակով մըտան Դունայի կէսը և ենթարկվեցին բուսական պահակախմբի կրակին։ Ձկնորսներից երկուսը սպանվեցին, երրորդը վիրաւորվեց։

14 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ուրալի հանքարդիւնաբերողների համագումարը գումարվում է փետրվարի 28-ին Պետերբուրգում։

ՍԻՄՖԷՐՕՊՕԼ։ Դատարանին յանձնվեց Եւպատորիայի նախկին քաղաքագլուխ Դուվանը նորընտիր քաղաքագլխի հաստատութիւնից յետոյ քաղաքագլխի պաշտօնը վարելուն համար։

ՍՈՒԽՈՒՄ։ Բոմբարաս գիւղում ձիւնից փլվեցին երկու տուն և 17 շինութիւն։ Զոհեր չը կան։

ՄՈՍԿՎԱ։ Զինուորա-նահանգական դատարանը հինգ տարվայ բանտարկութիւն որոշեց զինուորական խորհրդի գործավար Պոլեակովին և որոշեց նրանից առնել 65,000 ռուբլի յօգուտ վիրաւորների Ալէքսանդրեան կոմիտէի։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№4711

ՎԱՐԴԻ
ԲԻՒՐԵՂԵԱՅ
ՍԱՊՕՆ

անպայման անհրաժեշտ է կաշուի և երեսի գոյնի բարիքալի հոգայողութեան համար։
Գլիցէրինի մեծաքանակ բովանդակումն, որ-հեստուքիւն՝ փափուրի ստուգութեան պատճառով, վարդի բնոյծ անուշահոտութիւն,—ահա յատկութիւններ, որոնք զանազանում են այդ սապօնը։
ԿՏՈՐԸ 35 ԿՕՊ.

Իսկականը միայն մարկայով №4711
ՖԵՐԴ. ՄԻՒԼԳԷՆՍ
Պարֆիմէրիա №4711 Կէօլնում՝ Ռէյնի վրա։
Հիմն. 1792
ԲԱԺ. ՈՒՐԱՑՈՒՄ
Մատակ.-ատ Բարձ. Պալատ.
Ծախվում է դեղատներում և դեղատն. ու պարֆիմ. խանութներում։

(M. 436432/436450) 33. 11—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Սմեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԱՐՕՑՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍԱՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՐԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՇԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ականջի և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մարկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԳԱԲՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
3. 0—18

ԲԺԻՇԿ
Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵՆԱՑՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՒԲԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ( 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր ( 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(Ե. հ. կ.) 909. 100—87

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և սեռական-ուղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մանագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը ( առաւ. ժ. 9—11.
( երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—64

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ակուշերի, բերի, բկի,
հիւանդութիւններ,
Ընդունե- (առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (երեկոյեան 5—7 ժամը.
Վերեամինսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—45

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վենէրական և կաշուի հիւանդութիւնների։
Սիֆիլիսի բժշկութիւն Էրլիխի «606»-ով
Ընդունե- ( 12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը ( 5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր ( Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Հասցէն ( Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33.
( Sololaki, уголъ Бебутовской и Паскевича, 33.
(չ.ու.կ.) 1134. 100—67

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր ( առաւօտ. ժ. 9—12
( երեկոյեան ժ. 5—7
(Ե. հ. կ.) 1254. 100—36

ԿԱՆԱՅԻ ՇԱՊԻԿ

95 ԿՕՊԵԿ
Կարված բարակ և ամուր սպիտակ քաթանից, գեղեցիկ պրօշիվկաներով զարդարված։ Միանգամայն նոր և չքեղ ձևով։ կարված։ Գարնանային մեծ պահեստ ձեռք բերելու պատճառով ծախում ենք էժան գնով։ Լաւ տեսակը 1 ր. 25 կ., ամենալաւը՝ 1 ր. 50 կ.։ Ուղարկ. ենք 3 հատից ոչ պակաս։ Կանացի վարտիկներ, կարված բարձր տեսակի մաղէպալամից, գեղեցիկ կարեզարդված, 3 զոյգը 2 ր. 85 կ., լաւ տեսակը 3 ր. 75 կ., ամենալաւը՝ 4 ր. 50 կ.։ Այդ միևնոյն գնով ուղարկ. ենք տղամարդու 3 հատ շապիկ կամ 3 զոյգ վարտիկ։ Ուղարկում ենք վճարելիք վճ., առանց կանխավճ.։ Ճանապարհածախքի համար աւել հաշվվում է 75 կ., Սիբիր՝ կշռի տարբեր.։ 6 հատ բերել տալուց ճանապարհածախքը մեր հաշվին։ Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով։ Հասցէն՝ О-во МЕРКУРІЙ, Лодзь, М. 60. Եթէ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք։
(չ.) (B. 16183) 156. 3—1

## ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

ԱՅՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ

Նեվրասթենիայով, սեռական թուլութեամբ, զառամելութեամբ, իստերիկայով, նեվրագիայով, սակաւարիւնութեամբ, թոքախտով, սիֆիլիսով, սնդիկային բժշկութեան հետեւանքներով, սրտի հիւանդութիւններով (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բարախտում, պերէբոյ, միօկարդիա), զարկերակի կարծրացումով, ալկոհոլիզմով, ողնաուղի հիւանդութեամբ, կաթուածներով, հիւանդութիւններից առաջացած թուլութեամբ, յոգնածութեամբ և այլն։

Վաճառքի համար եկեալ են եկել բաղմաթիւ սակաւաբժէջ և առողջութեան համար մնասակար՝ մեր ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով, ըստ որում, հիւանդներին մոլորութեան մէջ ձգելու համար, կեղծողներն իրանց բէկլամների մէջ բերում են բժիշկների վկայութիւնները մեր ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ մասին, վերագրելով այդ դիտողութիւններն իրանց կեղծիքներին։ Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում այն անձերին, որոնք օգտվում են Սպերմինից, նախազգուշացնել այդ կեղծիքներից։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր բաղմաթիւ դիտողութիւնները գլխաւորապէս բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ փիրարար ազդեցութեան մասին, վերաբերում են բացառապէս ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, հետևաբար և խնդրում „ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուան և ֆիրմայի վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները ենք գտնում ժամանակ ուշադրութիւն դարձնել ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ։ Միակ իսկական Սպերմին ներկայանում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, սրուակը 3 ռուբլի։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար Սպերմինի մասին եղած հարուստ գրականութիւնը՝

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ՊՐՕՖԵՍՍՕՐ ԴՈԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում, В. О., 7 лин. 18.
(П. 1221) 1. 8—4

## ՀԻԻԱՆԴՆԵՐԻՆ

Լոյս տեսաւ
Հայոց Ազգագ. Ընկ. հրատարակութեամբ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
XX գիրքը (1910 թ. № 2).
Բովանդակութիւն.—Հայկական մանրանկարները, Մեսրոպը եպ. Տէր-Մովսէսեանի։ Նոր-Բայազէտի գաւառ Ե. Լալայեանի։ Սասնայ տան եօթը ճիւղ, Վանի գաւառաբարբառով։ Նոր-Նախիջևանի բանահիւսութիւնից Փորքչէհանի։ Ալաշկերտի բանաւոր գրականութիւնից Նժդեհեանի։ Դափանի բանաւոր գրականութիւնից Արքայիկի։ Վասպուրականի ազգագրութիւնը Եր. Լալայեանի։ Վասպուրականի նշանաւոր վանքերը Ե. Լ. Մատենախօսութիւն Տէր-Աւետիսեանի։
20 պատկեր ընդգրում և 11 առանձին թերթի վրա։
Գինն է 1 ր. 50 կ.
Բացված է «Ազգագրական Հանդէսի» 1911 թ.ի 2 գրքի բաժանորդագրութիւնը. բաժանորդագրին է 3 ր., 1910 թ. երկու գրքի հետ 5 ր.։
Դիմել՝ Въ редакцію «Азгаграканъ Андесъ», Тифлисъ, Воляминовская 14.
(ա.օ.) 157. 6—1

ՌՈՒՍ
ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐՈՂՆԵՐ
Լոյս են տեսել
1) Դ. Աժզման։ «Հանդոյցի լուծումը», թարգմ. Օ. Գենջեանի 3 կ.
2) Լէօնիդ Անդրէեվ։ «Անզգուշութիւն» թարգմ. Օլգա Գենջեանի 5 կ.
3) Կսենիա Մորոզովա։ «Ինչու են ջախջախված երջանկութեան թևերը», թարգմ. Յակովբ Գենջեանի 3 կ.
4) Ա. Ի. Կուպրին։ «Տրամվայում», թարգմ. Օ. Գենջեանի 5 կ.
5) Օսիպ Դիմով։ «Վեստալուհի» թարգմ. Յակովբ Գենջեանի 5 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
եւ մի քանի օրից լոյս կը տեսնի
Փեօդոր Սոլոգուբի Նովելա, «Ոսկէ սանդուխք», թարգմ. Յակովբ Գենջեանի։

Պատրաստվում են տպագրութեան համար հետևեալ հեղինակների գրուածները. Եվգենիյ Չիրիկով, Սերգէյեվ-Ցենսկի, Բորիս-Զայցեվ, Փեօդոր Սոլոգուբ., Թեմիզով, Սերգէյ Գորոդեցկիյ եւ այլն։
Վաճառվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում։
Գումարով առնողներին 20% զեղչ և ճանապարհածախսը հրատարակչի վրա։
Դիմել՝ Тифлисъ, Елизаветинская 114, Акопу Генджіану.
(կ.չ.ու.) 114. 20—5

Թիֆլիսի Առևտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
սրանով յայտարարում է պ. պ. բաժնեէրերին, որ № 3 կուպոնները՝ 1910 թ. դիվիդենդը ստանալու համար՝ վճարները կը տրվեն Թիֆլիսի Առևտրական բանկում փետրվարի 16-ից
(ա.օ.) 1911 թ.ի։ 153. 3—1

ԵՐԿԱԹԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ յիշատակին նուիրված Տարազի յատուկ №-ամանախի 28 պատկերը այլևս հատով չէ վաճառվում. սակաւաթիւ օրինակները կը տրվեն բացառապէս նրանց, որոնք միանուագ բաժանորդ կը գրվեն ԱՂԲԻՒՐԻՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ և ՏԱՐԱԶԻՆ, ուղարկելով բաժանորդագին հետ ևս 2 ր.։ Սրանք կը ստանան ամանախի №-ը, 18 գոյնով Վեհափառ Իզմիրլեանի Սանահնի դաբաւոր հոյակապ կամարների տակ մեծադիր պատկերը, 1911 թ. օրացոյց, 6 տեսակ պօստ-կարտեր Վեհափառ Իզմիրլեանի և նրա շուրջը։
Մինչև Մեծ-Պասը նրանք, որոնք կամենում են զարդարել իրանց տունը Վեհափառ Իզմիրլեանի 18 գոյնով մեծադիր պատկերով, պէտք է ուղարկեն 1 ր. 50 կ.։ Պատկերը կուղարկվի յատուկ խողովակի մէջ։ Վերադիր վճարով՝ 2 ր.։ Դիմել՝ ТИФЛИСЪ. Редакція „АГБЮРЪ-ТАРАЗЪ“.
ԱՂԲԻՒՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ, ՏԱՐԱԶԻ տարեկան բաժանորդագինը պրէմիաներով, յաւելուածներով 10 ր. (արտասահման 18 ր.), դպրոցական աշակերտի հասցէով 5 ր.։
(չ. ու.) 30. 0—8

La Revue
(Ancienne «Revue Des Revues»)
Peu de mots, beaucoup d'idées

| France et Colonies | | Etranger | |
|---|---|---|---|
| Un an | 24 fr. | Un an | 28 fr. |
| Six mois | 14 „ | Six mois | 16 fr. |

Prix du Numero 1 fr. 50
S'adresser: Paris, Rue Jacob, 45.

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում վաճառվում են հետեւեալ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| «Ռուսահայ-բառարան», Յ. Դաղբաշեանի | 8 ր. — |
| «Հայերէնից-ռուսերէն», » » (բաժանորդագրութիւն) | 5 ր. — |
| «Ռուսերէնից-հայերէն», Ց. Թումանեանի | — 75 կ. |
| «Հայերէնից-ռուսերէն», » » | 1 ր. — |
| «Հայերէնից-հայերէն», պատկերազարդ, կազմով, Գաբամաճեանի | 5 ր. — |
| «Բառգրքոյկ», արաբատեան բարբառի, Մ. Նաւասարդեանի | — 30 կ. |
| «Ֆրանսահայ բառարան», Լուսինեանի կազմած | 15 ր. — |
| «Բառգիրք արուեստից և գիտութեանց», Քալունու | |
| «Գերմաներէնից-հայերէն», Կոյլոսի կազմած | 7 ր. — |
| «Հայերէնից-ռուսերէն», Խուդաբաշեանի կազմած | 10 ր. — |
| «Բառգրքոյկ», Ս. Արեղեանի | — 20 կ. |
| «Ֆրանսերէնից-հայերէն», Նուբարեանի կազմած | 10 ր. — |
| «Հայերէնից-ֆրանսերէն», Ոսկեանի կազմած | 3 ր. 50 կ. |
| «Բառգիրք լատիներէն և օտարազգի դարձուածքների», Վ. Ա. | — 75 կ. |
| «Բառարան պարսկերէն», ըստ կարգի հայկական այբուբենից | 10 ր. — |
| «Ռուսերէնից-հայերէն», բառարան Երէցփոխեանի | 5 ր. — |
| «Բառարան պարսկերէնից-ռուսերէն», Տրօբանովսկիի | 10 ր. — |

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. И. Галустянцу.
143. 2—2


Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.